ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. նոյեմբերի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 4-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **20.11.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Շիրակ» (ՊԼ-089) խաղի ժամանակահատվածում «Շիրակ» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Վարդանի Վարդանյանի (19630) կողմից ոչ խաղային դրվագում մրցակցի հանդեպ բռնարարք կատարելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» ֆուտբոլիստ Էրիկ Վարդանի Վարդանյանի (19630) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-

րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Շիրակ» ֆուտբոլիստ Էրիկ Վարդանի Վարդանյանին (19630) որակազրկել 2 խաղով և «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

2. **19.11.2022թ-ի «Ֆալկոնս»-«Նաիրի ՄԱ» (ՍՖԱ-006) խաղի ժամանակահատվածում «Ֆալկոնս» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Էդվարդի Դավթյանի (1922) կողմից մրցավարի օգնականի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ֆալկոնս» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Էդվարդի Դավթյանի (1922) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 51-րդ հոդվածի 13-րդ կետը՝ «Ֆալկոնս» թիմի ֆուտբոլիստ Անդրեյ Էդվարդի Դավթյանին (1922) որակազրկել 1 խաղով և «Ֆալկոնս» ՖԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

3. **18.11.2022թ-ի «Նոա-08»-«Փյունիկ-2-09» (15Գ-015) խաղի ժամանակահատվածում «Փյունիկ-2-09» թիմի մարզիչ Գառնիկ Լյուդվիգի Հովհաննիսյանի (173) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու և հրելու վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Փյունիկ-2-09» թիմի մարզիչ Գառնիկ Լյուդվիգի Հովհաննիսյանի (173) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ Փյունիկ-2-09» թիմի մարզիչ Գառնիկ Լյուդվիգի Հովհաննիսյանին (173) որակազրկել մինչև 2023 թվականի ապրիլի 15-ը ներառյալ և «Փյունիկ» ՖԱ ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի՝ 15.000 ՀՀ դրամի չափով: